

լալով՝ ուրիշ թուշոց պէս մասնաւոր բոյն չեն շիներ ձագերնին պատասպարելու, հապա միայն պարզ խռնեւորով ու ծառի ճիւղերով խղիկ մը կը պատրաստեն. ինչպէս արծիւը, ձկնէ կուլը, արագիւն ու կռուակը: Արագիւն համար կ'ըսեն թէ՝ Պերսեպոլոյ աւերակներուն բարձր սիւներուն ծայրերը կը դնէ իր բոյնը: Սեցերորդ տեսակը սալապարձ թռչուններ կ'ըսուին՝ բոյներնին սակառիի ձև ունենալուն համար, որ զանազան խոտերով ու ծիղերով կը շինեն. եօթներորդ՝ սալապարձ թռչուններ որ զարմանալի վարպետութեամբ իրենց բոյնը կը հիւսեն. ութերորդ տեսակին ներքէն գետնէ կ'ըսուին, ասոնց մէջ ամենէն երևելին է Վերիկայի սարեալը, որ իր բոյնին ներսի գին տեսակ մը երկայն ու կակուղ խոտերով կը շինէ, անանկ մաքուր՝ որ կարծես թէ ասեղով բանուած է: Արսեն թէ կնկան մէկը աս թռչունին զարմանալի վարպետութիւնը տեսնելով հարցուցեր է թէ՝ Արդեօք ասոր գուրպայ հիւսել չէ՞նք կրնար սորվեցնել: Հնդկաստանի մէջ աս տեսակ թռչուն մը կայ որ լայն տերեւներով ծառ մը կ'ընտրէ, ետքը մէկ չորցած տերեւ մը ուրիշ կանանչ տերեւի մը վրայ բարակ թելերով կը կարէ, ու անիկայ իրեն բոյն կը շինէ: Երեսերորդ տեսակը Խաչապարձ ըսուած թռչուններն են որ զանազան նիւթեր քովէ քով յարմարցնելով՝ կապերտի կամ թաղիքի նման միակտուր բոյն մը կը ձևացնեն: Տասներորդ տեսակին բոյները խժային շաղախով մը շինուած է՝ որ թռչունը լորձուներով կը շաղուէ: Մետասաներորդ տեսակի թռչունները գմբէթի ձևով կը շինեն իրենց բոյնը, ինչպէս են մեր երկիրներուն շատ թռչունները: Արկոտասաներորդ տեսակինները գող Խաչապարձ կ'ըսուին, որ իրենց համար բոյն չեն շիներ, հապա ուրիշ թռչնոց բոյնին մէջ կ'ածեն իրենց հաւկիթները:

Սալապարձ ըսուածներուն կարգէն

կը սեպուի դեղնաւի՝ անունով թռչունը, և անոր մէկ տեսակին բոյնն է պատկերին մէջ դրածնիս: Հասարակ դեղնուկը, որ տաճկերէն սարլ Գուլ կ'ըսուի, տորդիկի չափ թռչուն մըն է՝ բոլոր մարմինը դեղին, ու միայն թւերն ու պոչերը սև՝ տեղ տեղ դեղին բծերով. միայն թէ էգին դեղնութիւնը աւելի ձիթենիի գոյն է, թւերն ալ մոխրագոյն: Ախարհքիս ամէն բարեխառն ու տաք կողմերը կը գտնուի. Վերիկայինը ոսկեգոյն է, որ Հոլանտայինը գոյնզգոյն, Աստորալիայինը կանանչ, Հնդկաստանինը սև. բայց ամենէն շատ ու աղուոր տեսակները Վերիկայիններն են:

Վէն տեսակ դեղնուկներն ալ իրենց բոյնը քսակի ձևով կը հիւսեն ու բարձր ծառերու ճիւղերէն վար կը կախեն, բայց ամենէն վարպետը Վերիկայի Պալմիթ դեղնաւի ըսուածն է, ու աս պատկերին մէջինը ան է: Վերիկայ այնպէս սիրուն կը հիւսէ բոյնն որ տեսնողը կը զմայլի. առջի հիւսուածքը վուշի կամ կտաւի թելէ ու բրդէ է, անոր բոլոր վրան ալ ձիու պոչի մազերով հիւսած. ներսի գին փափուկ նիւթերով կը պատէ, ան նիւթերն ալ իրարու հիւսելով:

1 Ըստ ոմանց՝ Բարս, և արևելք: ՏՃ. սարլ Գուլ. Գ. Գ. Lorient. Լատ. Oriolus. Խա. Rigogolo.

ՀԱՆԵԼՈՒԿ

Մի եմ և կրկին,

Եւ յերկու բաժին

Առնեմ միշտ ըզմին:

Բերանս է սուսեր

Ի գօտուոյս ի վեր.

Խոսիմ անվէհեր:

Մինչ անատամն եմ

Դիւրագոյն ուտեմ

Քան թէ մինչ ծամեմ:

Միայն թէ զաչս իմ

Յանտոխցս ունիմ.

Յաչացս ըմբռնիմ:

ԱՊՐԻԼԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԴԱԳԱՂ՝